— Ապա ո՞ւր են գնում պետութեան գանձարանից դուրս եկած ռոճիկները, — հարցրի ես:

— Խոշոր պաշտօնականների գրպանը, — պատասխանեց Ասլանը, — իսկ մանր պաշտօնականները բաւականանում են միայն «եկամուտներով»:

— Դու կարծո՞ւմ ես, փաշան այդ ձին ուղարկելով շահի նպատակ է ունեցել:

— Ես այդ չեմ կարծում: Եւրոպացիների հետ նրանք բոլորովին այլ կերպ են վարւում: Նա, այդ ձին ուղարկելով, կամեցել է կաշառել ինձ: Եթէ ես նրա քարտուղարին այն ոսկիները չտայի, նա աւելի ուրախ կը լինէր: Բայց ես չկամեցայ նրան պարտական մնալ: Այստեղ մի տարի առաջ կար մի անգլիական գործակատար. փաշայից յաճախ ընծաներ էր ստանում, քուրդ աւազակապետները նրա կնոջ եւ երեխաների համար եղջերոի ձագեր եւ կենդանի կաքաւներ էին ուղարկում, եւ նա քրդերի մասին շատ նպաստաւոր գաղափար կազմեց, համարելով նրանց բարի եւ ազնիւ մարդիկ եւ այնպէս էլ հաղորդեց իր կառավարութեանը: Իսկ հայերը նրան կաքաւներ չտարան եւ համարոեցան ագահ, ժլատ, հարստահարիչ հրէաներ:

Մեր խօսակցութիւնը ընդհատեց վարպետ Փանոսը, որ վերադարձաւ քաղաքից: Նա տարել էր մեր բեռները յանձնելու քարաւանին:

— Շնորհաւորում եմ, — ասաց նա ծիծաղելով, — գեղեցիկ ընծայ էք ստացել: Երեւի, փաշան չէ կամեցել, որ դուք չարոադարի անշնորհք ձիով ճանապարհորդէիք:

— Փաշան այդ մասին շատ քաղաքավարի է, — պատասխանեց Ասլանը: — Ասացէք, ե՞րբ է դուրս գալիս քարաւանը:

— Երեկոյեան, արեւը մտնելուց մի ժամ առաջ:

— Ուրեմն մենք բաւական ժամանակ ունենք մի քանի բաներ կարգադրելու:

Վարպետ Փանոսը եւ Ասլանը առանձնացան: Ես դուրս եկայ նոր ստացոած ընծայի վրայ հիանալու:

Ի. ՔԱՐԱՒԱՆ

Քարաւանների պատմութիւնը միշտ իմ վրայ կախարդիչ տպաւորութիւն էր թողել. նրանց մասին լսել էի շատ եւ շատ հետաքրքիր զրոյցներ: Այժմ դուք կարող էք երեւակայել իմ ուրախութիւնը, որ առաջին անգամ ես բախտ